

թեան: Պ. Մէլիէն, որ արեւելագէտ բանասիրութեանը լայտնի է արդէն իւր մասնագիտական յօդուածներով և որ ուսումնական նպատակով ճանապարհորդութիւններ ևս արած է՝ անծանօթ չը պիտի լինի կարծեմ թիֆլիսաբնակ մեր մի քանի հայ բանասէրներին ևս, որոնք առիթ պիտի սուենային տեսնելու նորան և ծանօթանալու մեր քաղաքում ներկայիցս 4—5 տարի առաջ:

Սրտանց ցաւելով այն զգալի կորուստի վրայ, որ ունեցաւ հայագիտութիւնը յանձին Ծ. Կառիէրի, մի և նոյն ժամանակ հոգով բարեմաղթում ենք ամեն տեսակ բարի ու շնորհաւոր յաջողութիւն երկտասարդ հայագէտ ա. Մէլիէին իւր այդ նոր պաշտօնում:

Շ. ՅԱՐՈՅ.

✱ ԱՂԵՔՍԵՆԴՐ. ԵՐԻՅԵԱՆ

«Լուսաւորի ներկայ համարը հրատարակուելու վերայ էր, երբ մի տխուր գոլժ հասաւ մեզ. փետրուարի 21-ին, առաւօտեան 7 ժամին, երկարատեւ հիւանդութիւնից լետով, վախճանուեցաւ Թիֆլիսում ամենքին ծանօթ կովկասագէտ Աղէքսանդր Երիցեանը 62 տարեկան հասակում:

Հանդուցեալը գիմնադրական կրթութիւն ունէր և բարձր ուսում չէր ստացել, բայց, ինչպէս լատինի է, իւր ինքնակրթութեամբ և տոկուն աշխատութեամբ, զարգացման այն բարձրութեան է հասել իւր մասնագիտութեան նկատմամբ, որ շատ և շատ համալսարանական դրագէտներ պատիւ էին համարում զիմել նորան և օգտուիլ նորա անբաւ հմտութիւնից:

Երիցեանի գործունէութիւնը զրակաւն ասպարիզում ընդարձակ էր և բեղմնաւոր. նա աշխատակցել է տեղւոյ հայ և ռուս գրիթէ բոլոր թերթերին, բայց նորա լաւագոյն աշխատութիւնները տպուել են «Փորձի» և «Արձագանքի» մէջ, որոնց մշտական և եռանդուն աշխատակիցն էր մինչև նոցա դադարումը:

Բացի դոցանից Երիցեանը թողել է և շատ աշխատութիւններ առանձին զրփերով, որոնց մէջ ամենից աչքի են:

ընկնում Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը երկհատոր
գործը և Ներսիսեան դպրոցի պատմութեան առաջին հատո-
րը, և որոնք սակայն, ինչպէս և նորա զրեթէ բոլոր աշ-
խատութիւնները, անաւարտ մնացին:

Մենք ի հարկէ դեռ կվերադառնանք Ա. Նրիցեանի գը-
րական գործունէութեան:

Առ ալժմ մեզ մնում է արտալատել մեր խորին վիշտը
հալ բանասիրութեան և պատմական գրականութեան ալդ մեծ
կորուստի վերալ, որ հաւասարապէս ողբացին հանգուցեալին
լարդող ամեն ազգի գրագէտներ և լրագիրներ:

Նրիցեանի թաղումը տեղի ունեցաւ բուն բարեկենդանի
օրը, Վանքի ա. եկեղեցում ս. սլատարագից լետոյ հանգու-
ցեալի վերալ դամբանական խօսեց Ազգիս սրբաղնագոյն Հայ-
րապետը, իսկ Վանքի դաւթում վրաց լեզուով դամբանական
կարդաց վրացի կովկասագէտ Ջանաշվիլին, զրուատելով հան-
գուցեալին որպէս Կործող երկու դրացի ազգութիւնների ան-
ցեալ կեանքի ուսումնասիրութեան ասպարիզում:

Յաւիտենական հանգիստ անխոնջ վաստակաւորի ոսկը-
ներին:

